

Համարող Տիպը	N 1445-Ն Որոշում	Տեսակը Կարգավիճակը	Ինկորպորացիա Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2006.11.08/57(512) Հող.1151	Ընդունման վայրը	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	Ընդունման ամսաթիվը	22.09.2006
Ստորագրող մարմինը	ՀՀ Վարչապետ	Ստորագրման ամսաթիվը	21.10.2006
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	Վավերացման ամսաթիվը	25.10.2006
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	28.12.2006	Ուժը կորցնելու ամսաթիվը	

Մայր փաստաթուղթ: Կառավ.22.09.2006,N 1445-Ն	
Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը`	Համապատասխան ինկորպորացիան`
Կառավ.21.12.2006,N 1862-Ն	Կառավ.22.09.2006,N 1445-Ն
Կառավ.17.02.2011,N 140-Ն	Կառավ.22.09.2006,N 1445-Ն
Կառավ.03.03.2011,N 187-Ն	Կառավ.22.09.2006,N 1445-Ն
Կառավ.28.04.2011,N 636-Ն	Կառավ.22.09.2006,N 1445-Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԹԱՆԿԱՐԺԷՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍԿԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԼԻՑԵՆԶԿՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում են»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
25 հոկտեմբերի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2006 թվականի N 1445-Ն

ԹԱՆԿԱՐԺԷՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍԿԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԼԻՑԵՆԶԿՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Վերնագիրը փոփ. 03.03.11 N 187-Ն)

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 26-րդ հոդվածի 1-ին մասերը, «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և 11-րդ հոդվածի 1-ին մասերը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 895 որոշման 4-րդ կետը` Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել, որ «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նշված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին, այդ թվում` թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման, հարգադրոշման, թանկարժեք մետաղների գտարկման, բանկային ոսկու, ստանդարտացված ձուլակտորների արտադրության գործունեության պահանջների ու պայմանների պահպանման նկատմամբ, մանրածախ առուվաճառքի նկատմամբ հսկողությունն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

(1-ին կետը խմբ. 21.12.06 N 1862-Ն, փոփ. 03.03.11 N 187-Ն)

2. Հաստատել`

ա) (ենթակետն ուժը կորցրել է 03.03.11 N 187-Ն)

բ) (ենթակետն ուժը կորցրել է 03.03.11 N 187-Ն)

գ) (ենթակետն ուժը կորցրել է 03.03.11 N 187-Ն)

դ) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.

ե) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման լիցենզիա ստանալու մասին հայտի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի.

զ) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի:

(2-րդ կետը փոփ. 03.03.11 N 187-Ն)

3. Առաջարկել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված՝ թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվությունը տրամադրելուց հետո 5-օրյա ժամկետում տեղեկատվությունները տրամադրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2006 թվականի դեկտեմբերի 28-ից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2006 թ. հոկտեմբերի 21
Երևան

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2006 թվականի
սեպտեմբերի 22-ի N 1445-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման լիցենզավորման կարգը:

2. Լիցենզիա ստանալու համար հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1445-Ն որոշմամբ հաստատված N 5 հավելվածի:

Հայտում նշվում են՝

ա) իրավաբանական անձի համար՝ իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, ազգանունը.

բ) իրավաբանական անձի համար՝ իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ բնակության վայրը.

գ) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել.

դ) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման գործունեության իրականացման վայրը.

ե) հայտատուի ներկայացուցչի տվյալները (անունը, ազգանունը, անձնագրի համարը, բնակության վայրը, հեռախոսահամարը).

զ) հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

3. Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) իրավաբանական անձի համար՝ կանոնադրության, պետական գրանցման վկայականի և ՀՎՀՀ-ի պատճենները, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ պետական գրանցման վկայականի և սոցիալական քարտի կամ ՀՎՀՀ-ի պատճենները.

բ) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման գործունեության իրականացման տարածքի սեփականության, վարձակալության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենները.

գ) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշմամբ և հարգադրոշմամբ զբաղվող աշխատողների մասնագիտական որակավորման վկայականների պատճենները.

դ) համապատասխան տարածքային հարկային մարմնի կողմից տրված՝ հայտատուի հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով պարտավորությունների մասին տեղեկանք՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ:

4. Լիազոր մարմինը հայտն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում քննարկում է այն՝ հայտատուին 7 օր առաջ գրավոր տեղեկացնելով քննարկման վայրի (հասցեի), օրվա ու ժամի մասին: Լիազոր մարմինը քննարկումն իրականացնում է անկախ հայտատուի ներկայացուցչի ներկայությունից:

5. Լիազոր մարմինը բավարարում կամ մերժում է լիցենզիա ստանալու մասին հայտը՝ «Լիցենզավորման

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

6. Հայտի մերժման կամ բավարարման դեպքում լիազոր մարմին ներկայացված փաստաթղթերը չեն վերադարձվում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Ս. Թովուզյան
Հավելված N 5
ՀՀ կառավարության 2006 թվականի
սեպտեմբերի 22-ի N 1445-Ն որոշման

24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՅՆ ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1445-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱԴՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Հ Ա Յ Տ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱԴՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. _____

(դիմող կազմակերպության (այսուհետ՝ դիմող) անվանումը և կազմակերպական-իրավական ձևը)

2. Հայտատուի՝
ա) գտնվելու վայրը
(գործունեության իրականացման վայրը)
բ) հեռախոսահամարը
3. Հայտատուի՝
ա) նախատեսվող գործունեության իրականացման վայրը
բ) նախատեսվող տարածքում առկա հեռախոսահամարը
4. Հայտատուի ներկայացուցչի՝
ա) անունը, ազգանունը
բ) անձնագրի համարը
գ) բնակության վայրը

(քաղաքը, փողոցը, շենքը, բնակարանը)

դ) հեռախոսահամարը

5. Դիմումին կցվում են հետևյալ փաստաթղթերը՝

NN ը/կ	Փաստաթղթի անվանումը	Առկայության դեպքում կատարել նշագրում	Նշել թերթերի քանակը
1.	Հայտատուի՝ իրավաբանական անձի համար՝ կանոնադրության, պետական գրանցման վկայականի և ՀՎՀՀ-ի պատճենները, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ պետական գրանցման վկայականի և սոցիալական քարտի կամ ՀՎՀՀ-ի պատճենները		
2.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման գործունեության իրականացման տարածքի սեփականության, վարձակալության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենները		
3.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշմամբ և հարգադրոշմամբ զբաղվող աշխատողների որակավորման վկայականների պատճենները		
4.	Համապատասխան տարածքային հարկային մարմնի կողմից տրված՝ հայտատուի հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով պարտավորությունների մասին տեղեկանք՝ վերջին հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ		
Հայտին կցված փաստաթղթերի թերթերի ընդհանուր քանակը			

Սեփական ձեռքով սույն դիմումում կատարված գրառումների և նշագրումների իսկությունը հավաստում եմ

հայտատուի ներկայացուցիչ

_____ (ստորագրությունը)

_____ 2006 թ.

(Ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1445-Ն որոշման

Տրված է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թ. N հրամանով

24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա

N ՀՀ _____

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ
ԵՎ ՀԱՐԳԱՂՈՇՄԱՆ

Տրված է _____ 200 թ.

գրանցված

տարածքում գործող թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման համար

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի տեղակալ

Կ.Տ.

Լիցենզիան տրվում է անժամկետ:

Ստացել եմ լիցենզիայի բնօրինակը _____ 2006 թ., որի համար ստորագրում եմ

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան